«Հաստատում եմ» ____________

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր [illegible]

«17» հունիսի 2024թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գայանե Սերգեյի Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» վերնագրով ԺԳ.00.02 թվանիշով, «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (երաժշտություն)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Բոլոր ժամանակներում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության խնդիրը հասարակության ապագայի, նրա ներդաշնակ առանցքնթացի առաջնային խնդիրներից է եղել: Անձի ձևավորման, զարգացման հարցում կարևոր է վաղ տարիքից գեղարվեստի, գեղեցիկի ընկալման, ճաշակի զարգացման ճիշտ ներդրումը: Այս խնդիրը հույժ արդիական է մեր երկրի վերափոխումների այս բարդ ժամանակներում, երբ փոփոխությունների է ենթարկվում կրթական համակարգը, վերանայվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման ձևերն ու մոտեցումները, կրթական ծրագրերը, դասագրքերը: Խնդիրները բազմազան են և այսօր հայ երեխայի ազգային ինքնության, ստեղծագործական ընդունակությունների զարգացման, արժեքային կողմնորոշումների և դիրքորոշումների ձևավորման հարցերը ուսումնասիրության կարիք ունեն, առկա են հակասություններ, որոնք ձևավորել են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է առաջադրված հետազոտության հրատապությունը: Այս իմաստով Գայանե Հարությունյանի «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (երաժշտություն)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացրած ատենախոսությունը հետազոտական խնդրի հրատապ թեմա է:

Աշխատանքի բուն բովանդակությունը մեկնաբանող ներածությունում Գ. Հարությունյանը հիմնավորում է իր ուսումնասիրությանը խնդրի առարկայի այսօրվա թելադրվող հրատապությունը, նպատակը, խնդիրները, գիտական վարկածը մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունը հիմնավորվածությունն ու բազան, պաշտպանության ներկայացվող հայեցակարգային դրույթները, փորձաքննությունը, ատենախոսության փորձարարական հիմքը:

Ատենախոսության առաջին գլխում, որը կրում է «Հայ երաժշտամանկավարժական մտքի զարգացման պատմական նախադրյալները» վերնագիրը, համակարգված կերպով ներկայացված են հայ երաժշտական արվեստի սկզբնավորման և զարգացման փուլերը, կան ականավոր երաժիշտ-մանկավարժների գործունեությանն և երաժշտական դաստիարակությանը Հայաստանում XVIII-XX դարերում վերաբերող ուշագրավ տեղեկություններ, վերլուծություններ: Ներկայացված են երաժշտական մանկավարժության ձեռքբերումները և մանուկների համար ստեղծագործող կոմպոզիտորները:

Ատենախոսության երկրորդ գլխում, որն ունի «Նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաձշտական ընդունակությունների զարգացման տեսական-մեթոդաբանական հիմքերը» խորագիրը, տրվում են նախադպրոցական տարիքի երեխաների «ազգային ինքնություն» և «երաժշտական ընդունակություններ» հասկացությունների բնութագրերը, քննարկվում է երաժշտության դերը երեխաների դաստարակության և ազգային երաժշտական մտածողության զարգացման գործընթացում:

Երրորդ գլխում հեղինակը ներկայացնում է նախադպրոցականների ազգային ինքնության, զարգացման, մեթոդական ապահովման և դրա փորձարարական հարցերը: Այս համատեքստում ներկայացված է գիտափորձի անցկացման ընթացքը, որն իրականացվել է Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեջի Միրան Մանուկեան մանկապարտեզում: Վերլուծված են գիտափորձի անցկացման արդյունքները ըստ տարբեր չափանիշների, ատկա են թեստերի օրինակները:

Հետազոտական հատվածում ընդարձակ կերպով ներկայացված են փորձարարական և ստուգիչ խմբերի արդյունքների վերլուծությունները ըստ փուլերի, հիմնավորված է ազգային ինքնության զարգացման արդյունքները, ուշագրավ է

նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման մեթոդական համակարգի ամփոփ ներկայացումը և փորձարարական ուսումնական ծրագրի ներկայացումը: Արված է եզրակացություններ, որոնք առաջադրված խնդիրների ամփոփ լուծումներն են:

Ատենախոսությունն առավել լիարժեք տեսնելու նպատակով հարկ ենք համարում ներկայացնել որոշ դիտողություններ.

1. Ատենախոսության վերնագրում տեսանելի չէ, որ հետազոտությունը վերաբերում է սփյուռքում ապրող նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային ինքնության զարգացմանը: Հետազոտության նպատակում օբյեկտի սահմանման մեջ հստակ շեշտադրվում է հիմնախնդրի քննարկումը սփյուռքում:

2. «Սփյուռք» և «սփյուռքահայ» հասկացությունները բավականին լայն են: Կարծում ենք կարելի էր հստակեցնել, թե ո՞ր սփյուռքի մասին է հետազոտությունը (խոսքը գնում է հետազոտական ապարատի բաղադրիչների մասին):

3. Կրթական ծրագրերում հարկ էր առավել լայն ընդգրկումով ներկայացնել ժամանակի դինամիկայով պայմանավորված պահանջները, բացահայտել երաժշտական կենցաղի առանձնահատկությունների օրինաչափությունները, ազգային խախտման այսօրվա պատճառները:

4. էջ 102, 103-ում տրված է լադային լսողության զարգացման առաջին փուլում կիրառվող եռաստիճանիկները, հետո միայն ամբողջ լադի պատկերը, իսկ հավելվածում 262 էջում պատկերված խմբի երեխաներն օգտագործում են ամբողջ լադի 7 աստիճանների պատկերները: Մեր կարծիքով նպատակահարմար է ուսուցման առաջին փուլում օգտագործել լադի այն աստիճանների պատկերները, որոնք ընկած են այդ երգերի հիմքում:

5. Աշխատանքում կան ուղղագրական սխալներ էջ 157, 159, 160. ոճական անհարթություններ:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ներկայացվող պահանջներին և արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս դիտարկումները չեն ստվերում տույն հետազոտության գիտական արժեքը: Աշխատանքում ներկայացված պարապմունքների թեմաները, կրթական ծրագրերը

կարելի է կիրառել ՀՀ նախադպրոցական հաստատությունների համապատասխան խմբերում:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Գայանե Սերգեյի Հարությունյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (երաժշտություն)» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2024թ. հունիսի 14 «Մանկավարժության» ամբիոնի թիվ 15 նիստում:

Ամբիոնի նիստին արտահայտվել են մանկ. գիտ. դոկտոր, դեցենտ Ա. Կիրակոսյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ. Եղոյանը:

Նիստին մասնակցել են մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսորներ Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Ցայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զաղոյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Պետրոսյան